

այս խաչը, որպէս քրիստոնէական գերագոյն սրբանշան, անոնց հողակոյտերը լուսաւորող կանքեղ: Կրեցէ՛ք գայն Ձեր կուրծքին վրայ, եւ յիշեցէ՛ք զիրենք Ձեր աղօթքներուն մէջ:

Թող այս խաչը Ձեր ձեռքին մէջ ըլլայ Ղեւոնդեանց սուրբ նշանը, վերահաստատելու՝ որ վարդանի նոր սերունդները չեն սասանիր հին ու նոր Յագկերտներէն:

Թող այս խաչը Ձեր կուրծքին վրայ յարգանքի ու պաշտամունքի նշանաբանն ըլլայ՝ հայ ժողովուրդի սրտին, վսեմացած ու ազնուացած իր նահատակներու արիւնով ու անիւններով:

Արցունքը աչքերուն մէջ, Բժ. Մանուկ Սանդուկեան անցաւ ապա համառօտ դժերով պատկերացնելու տխուր պատմութիւնը հայկական դատին եւ ցեղասպանութեան ահաբեկ ոճիրին: Բուռն վախճալայտեց նոր յուշարձանով՝ մը անմահացնելու մեր նահատակներուն յիշատակը, դռնէն:

«Բաղաճակիրք աշխարհի այս մոռացումի տխուր ամպերուն ներքեւ, Փոքր Ասիոյ նամբաներուն, սարերուն եւ հովիտներուն մէջ կը ննջեն մեր նահատակները: Զանոնք ծածկող հողերուն վրայ միայն տատակն է որ կը բուսնի: Մէկ ու կէս միլիոն մեր նահատակները չունին յուշարձան մը, կանքեղի մը սուրբ բոցը՝ որպէս աղօթք առ Աստուած բարձրացող: Մեր գոհերուն գերեզմանները դեռ կը մընան անյուշ ու անձանօք:

Ի՞նչ բան կը կանցնէ մեր պարտքը, ըստեղծելու համար սրբավայր մը, մեր անձանօք նահատակաց հոգիներուն հանգրստեան: Վառելու եւ վառ պահելու հո՛ն անոնց յիշատակին սուրբ բոցը...:

Գերապայծառ Արքայադէպ, բոյլ տուէ՛ք ինձ սրտաբախ կոչ մը ուղղել Միսիթարայ Տունէն, այս մեր պաշտելի Կղզեակէն, Մայր Հայրենիքի եւ ամբողջ Սփիւռհաշուրեան սգաւոր սրտին, մասնակից ըլլալ՝ կանգնելու այս հայ հողին վրայ, այս խաղաղ ու չէզոք կղզեակին մէջ արժանաւոր ու խօսուն յուշարձան մը՝ ի յիշատակ մեր նահատակներուն, յուշարձան մը՝ որ

պատմէ՛ նշմարտութիւնը, իրականութիւնը, այն սուգի օրերուն, գոր այսօր մենք կը վերյիշենք ու կ'ոգեկոչենք. որպէսզի աշխարհաշրջիկ մարդկութիւնը, հոս իր այցելութեան, տեսնէ ու դատէ քէ ո՛րք է նշմարտութիւնը, տեղեկանայ քէ որո՞նք են նահատակները, որպէսզի սեւ ու ներմակ ցեղերն ու ժողովուրդները համոզուին քէ հերոսական ժողովուրդ մըն է Հայը, որ գիտէ սուկալ ու վերապրիլ նահատակներուն փոքրիկներուն մէջէն:

Բժ. Մ. Սանդուկեանէ ետք՝ խօսք առին ճրտ. Փ. Պապիկեան, ճրտ. Օննիկ Մանուկեան եւ Տիար Ստեփան Սրապեան: Վերջին երկուքը, թէպէտ Տրապիզոնցի չեն, սակայն դաւակներ նահատակներու, հողեկան անքակտելի կապերով միացած միւսներուն, սիրալոյսով իրենց մասնակցութիւնը յայտնեցին թէ՛ անդուգական նուէրին եւ թէ՛ բանախօսին աղնուական զաղափարներուն:

Ամէնէն վերջ, Գրպոյ. Արքայադէպը, ջերմ չորհրդակալութիւն յայտնելով ամէնուն, մանաւանդ նուիրատու իր հայրենակիցներուն, յուշումով կու գար յայտարարել թէ ինչպէս այդ խաչը իրեն համար կը խորհրդանշէր խաչի այն ճանապարհը, ուրկէ քալած էր ինքն ալ, յիսուն տարիներ առաջ. ուրկէ քալած էին իր եւ շատերուն նահատակ ծնողները, դէպի Հայոց Գողգոթան: Իսկ ոսկէ շղթան, որուն նման շղթաներ տեսած էր շատ մը հայ մայրերու կուրծքին, երջանիկ օրերուն, իրեն կու գար յիշեցնել բոլոր նահատակ հայ մայրերը, որոնք նոյնպէս քալեցին այդ խաչին ճամբէն, որուն ծայրը կանգնած էր Քրիստոս բաղկատարած եւ Տիրամայրը տիրապիլ: Այդ խաչը կու գար առաջին յիշեցնել զո՛րք մեծ Գողգոթային, դառնալով հիմա համակ աղօթք՝ մեր բնականորէն նահատակներուն խնկելի յիշատակին: Այսպէս, ուրեմն, կրկնակի նուիրական յիշատակ մը՝ այս խաչը, ձօնուած նահատակներու յիշատակայ տօնակատարութեան առիթով:



ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ

Ապրիլեան Հայ Նահատակներու յիշատակը վատիկանի մէջ	178
Նամակ Ամնպտ. Իգնատիոս Պետրոս ԺԶ. Պատրիարքին առ Ն. Ս. Պօղոս Զ. Սրբգ. Քա- հանայայտ	180
Նամակ Ն. Ս. Պօղոս Զ. Սրբգ. Քահանայայտէն առ Ամնպտ. Իգնատիոս Պետրոս ԺԶ. Կարողիկոս Պատրիարք	182
Ապրիլեան Յիսնամեակը Միլանի մէջ	183
Յիսնամեակը Միլանի մէջ (Բերքուած՝ Արամայիս Սրապեանի)	191
Ոգեկոչում Ապրիլեան Նահատակներու, Միլանի Մայր տաճարին մէջ՝ Վսեմ. Միր. Գր. Պետրոս Աղանանեանի կողմէ (Խաղերէն, հանդերձ հայերէն բարգմաճութեամբ)	192
Ապրիլեան Նահատակներու յիշատակը Ս. Ղազարի մէջ	197
Տրապիզոնցիներու նուէրը Ապրիլեան Զոհերու յիշատակին առիթով	199

ՄԵՐ ՆԿԱՐՆԵՐԸ

Սուրեն, երիտասարդ, խոստումնալից նկարիչ մը, Հալէպցի, հեղինակն է «Բագմավէպ»ի ներկայ թիւին մէջ լայս տեսած գունաւոր նկարներուն:

Ներշնչուած Ապրիլեան Նահատակներու կարմիր յիշատակէն, հրդեհող բոցերու եւ սպառնացող ալիքներու ընդմէջէն, Սուրեն իր ձայնը կը լսեցնէ ու կը բերէ իր խանդավառ մասնակցութիւնը համագային Յիսնամեակին:

ա) Աւետարանի պաշտամունքը, ամուր հաւատքը հայ ժողովուրդին՝ կը մնայ անասան, Արարատի գագաթներուն նման բարձր ու վեհ, հակառակ զինք խեղդող արիւնոտ ծովին, փոքրկայոյց մրրիկին: Գերեզման է ստոքին վրայ ինկած եւ հագարաւոր նահատակներ. ու հագարաւոր խաչեր միաբարբառ կը հայցեն Արարչին գութը. յայտի բուրվառ կ'ամպանայ երկինք, Ապրիլ 24ի խորհուրդը խնկաւետելով:

բ) Փրփրակուտակ ալիքներուն վրայ կը տատանի խորհրդաւոր լաստափայտը Հայութեան. խաչապսակ պատմագիրք մեր հագարամեայ՝ փրկուած է, սուրբ՝ կայմն է անխորտակելի, եւ դրօշը՝ առագաստ փրկութեան. վահանը կուրծքի կու տայ մրրիկին. ծիրանի գօտին կ'աւետէ վերահաս փրկութիւնը. ցորենի հասկը՝ ցեղին կենսունակ ոգին յաւերժացնող՝ ապագայ սերունդին հացը պիտի ըլլայ արեւահամ:

գ) Դաժան շղթաներ եւ արիւնի արեւալիքներ չեն կարող կանցնել յաւատեւ աշխատանքը հայ ազգին, որ խաչին շուրջին տակ՝ դարձեալ կեանք կ'առնէ, համբերութեամբ կը շինէ իր նոր բոյնը. հասկն ատո՛ք է եւ լուսաշող: Խաւարը պարտուած է:

Ահա Սուրենի խնկումներէն, գոր հանդիմով կը ներկայացնենք մեր ընկերացիներուն, մաղբելով իրեն յարանուն վերելք եւ նորանոր նուաճումներ:

SUOI E ANNI		PRIX DE L'ABONNEMENT ANNUEL	
Խաղաղ համար	3500 L	Pour l'Italie	3500 Lires
Արտասահմանի համար	8 S	Pour l'Etranger	8 Dollars
Մէկ թիւը՝ 250 թր	0,50 S	Le Numéro: 250 Lires - 0,50 Dollars	

ԿԸ ՀԲԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ «ԳԱՆՈՒՍ ԿԻՒՊԵՆԿԻԱՆ ՀԻՄՆԱԿՈՒԹԵԱՆ» ՆՊԱՍՏՈՎ
 PUBLIE AVEC LE CONCOURS DE LA «FONDATION CALOUSTE GULBENKIAN»
 Direzione - Amministrazione - Pubblicità - Abbonamenti - Isola San Lazzaro - Venezia (Italia) - Tel. 60-104
 Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia
 Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia